ՆԱԽԱԳԻԾ

ԾՐԱԳԻՐ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանում	**Ակնկալվող արդյունք**	**Ժամկետ**	**Պատասխանատու մարմին /համակատարող/**	**Ֆինանսավորման աղբյուր**
1	2	3	4	5
Նախազորակոչային տարիքի դպրոցականների ուսումնական ծրագրերում զինծառայողների իրավունքների և պարտականությունների, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերի վերաբերյալ դասաժամերի նախատեսում	1. Մարդու իրավունքների վերաբերյալ բնակչության՝ հատկապես զինծառայողների և ՊՆ համակարգի աշխատակիցների իրազեկության բարձրացում (2013-2014թթ. ուսումնական ծրագրերում համապատասխան լրացումներ խնդրո առարկայի շուրջ)	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կրթության նախարարություն	
Թրաֆիքինգի, այդ թվում՝ հարկադիր աշխատանքի վերաբերյալ զինծառայողների և հատկապես խաղաղապահ ստորաբաժանման անձնակազմի շրջանում իրազեկվածության բարձրացման հարցում տեսամեթոդական օժանդակության մշակում և տրամադրում	2. «Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպական ազգային ծրագրից բխող միջոցառումների	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն	

	կատարում			
Խոշտանգումների և այլ անմարդկային ու դաժան վերաբերմունքի կանխարգելմանն ուղղված միջոցառումների շրջանակում ՀՀ պաշտպանության նախարարությանը տեսամեթոդական և գործնական օժանդակության մշակում և տրամադրում		2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ կրթության նախարարություն	
-Ձեռնարկել միջոցներ զինվորական ծառայության անցնելու մասին պայմանագրի դադարեցման գործընթացներում խոչընդոտները վերացնելու ուղղությամբ. -Մշակել կարգ՝ զորակոչի և զորացրման աշխատանքներում համաչափությունն ապահովելու նպատակով - Վերանայել ՀՀ պաշտպանության նախարարի 2010թ. ապրիլին ստորագրված այն հրամանը, ըստ որի ընտրովիության սկզբունքով որոշ զինակոչիկներ ուղարկվում են կրկնակի բուժհետազոտության. -Հստակեցնել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի	4. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ պաշտպանության նախարարություն	

7-րդ մասով ամրագրված «այլ զինակոչիկներ» եզրույթը - Կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ բացառելու համար ժամկետային զինծառայողների ծառայությունը զինվորական դատախազությունում անցկացնելը -Կատարել ուսումնասիրություններ՝ համակարգի ներսում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ				
-Պետական նպաստների վարչարարության բարեփոխում -Մոնիթորինգի և վերահսկողության մեխանիզմների հստակեցում - Պետական նպաստների չափերի պարբերաբար բարձրացում՝ հիմք ընդունելով սոցիալ-տնտեսական զարգացման միտումները	5. Համապատասխան ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ուղղված պետական նպաստների ոլորտում օրենսդրական բարեփոխումներին	2013 երրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, համայնքի ղեկավար /համաձայնությամբ/	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
- Աշխատանքի անվտանգության ու առոջղության պահպանման ազգային ծրագրի մշակում - Աշխատանքային վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդրում	6. Աշխատանքի անվտանգության ու առողջության պահպանման ազգային ծրագրի ընդունում	2013թ.երրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
- Անօթևան տարեցների	7. Տարեցներին որակյալ	2013թ.չորրո	ՀՀ աշխատանքի և	ՀՀ պետական

սոցիալական աջակցության ծրագրերի մշակում և իրականացում - Հստակեցնել տուն-ինտերնատ ընդունվելուն առնչվող դրույթները - Որպես նյարդահոգեբանական տուն-ինտերնատների այլընտրանք, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող և/կամ ծերունական փսիխոզով տառապող միայնակ տարեցների համար ընտանեկան տիպի մասնագիտացված խնամքի տների և սոցիալ-վերականգնողական կենտրոնների, ինչպես նաև նրանց տնային պայմաններում սպասարկման կազմակերպում	սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռնմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունում	րդ եռամսյակ	սոցիալական հարցերի նախարարություն	բյուջե դոնոր կազմակերպություններ
-ՀՀ օրենսդրության համապատասխանեցում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների պահանջներին - «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների	6. «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ

պաշտպանության և սոցիալական ներառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունում				
- Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման գործընթացի արդյունավետության բարձրացում -Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզա-օրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով, այդ թվում՝ սայլակներ և լսողական սարքեր, ապահովման գործընթացի բարելավում - Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների, հանրային քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում և իրականացում - Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուսաբանում, գրքույկների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների կազմակերպում	7. Հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բարելավմանն ուղղված սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ

- Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի բոլոր ոլորտներում մատչելիության ապահովում				
- Ձեռնարկել անհապաղ միջոցներ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդիրները լուծելու ուղղությամբ՝ վճարման համար պատասխանատու կազմակերպության լուծարման դեպքում - Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշխատանքային և սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ առկա հակասությունները վերացնելու, կամայական մեկնաբանությունների տեղիք տվող օրենսդրական բացերը լրացնելու, աշխատանքային և սոցիալական իրավունքների ապահովման անհրաժեշտ երաշխիքները սահմանելու, ՀՀ	8. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող օրենսդրական բարեփոխումներ /ՀՀ աշխատանքային օրենսգրքում անհրաժեշտ փոփոխություններ/	2013թ. երկրորդ և երրորդ, չորրորդ եռամսյակնե ր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	

կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով. - Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ոլորտում իրավասու մարմինների կողմից գնահատողական հայեցողության հնարավորինս կրճատման, հաշմանդամության որոշման չափորոշիչների առավելագույն հստակեցման, ԲՍՓՀ-ների գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ. - Օրենսդրորեն լուծել աշխատավարձի ինդեքսավորման կարգի ընդունման խնդիրը. - Ձեռնարկել միջոցներ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրով նախատեսված և չիրականացված կամ ոչ լիարժեք իրականացված միջոցառումները կատարելու ուղղությամբ. - Մշակել արդյունավետ				

մոնիթորինգի համակարգ՝ կենսաթոշակների և նպաստների նշանակման, քաղաքացիների բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման օրենսդրությամբ սահմանված պահանջների պատշաճ կատարումը վերահսկելու համար				
- Գենդերային իրավիճակի պարբերական գնահատման մեթոդաբանության մշակում -Սեռի հատկանիշով բռնության դեմ պայքարի ուժեղացմանն ուղղված միջոցառումների իրականացում - Գենդերային բռնության զոհերին տրամադրվող սոցիալական, բժշկական և իրավական աջակցության և ծառայությունների տրամադրման ապահովում - Գենդերային հիմքով բռնության զոհերի համար ժամանակավոր կացարանների և/կամ ապաստարանների ստեղծում	9. Գենդերային իրավիճակի շարժընթացի գնահատման և մշտադիտարկման ցուցանիշների ներդրում, ինչպես նաև հետևյալ ռազմավարական ծրագրերով՝ «Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիր», «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը», նախատեսված միջոցառումների իրականացում	2013թ. երկրորդ և երրորդ եռամսյակներ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
- Աշխատող երեխաների վերաբերյալ հետազոտության արդյունքների քննարկում և	10. Բռնության զոհերի իրավական աջակցության ծրագրի ընդունում, ինչպես	2013թ. երկրորդ եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպությու

անհրաժեշտության դեպքում թրաֆիքինգի դեմ պայքարին առնչվող առաջարկությունների մշակում -Մշակել և ներդնել մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց մատուցվող անհրաժեշտ ծառայությունների նվազագույն չափորոշիչներ - Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ ենթարկված անձանց աջակցության աջակցության գործընթացի կազմակերպմանն ուղղված ծրագրերի մշակում	նաև միջոցառումների իրականացում համաձայն «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագրի և «Հայաստանի Հանրապետությունում 2010-2012թթ. ընթացքում մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի»		նախարարություն	ններ
- Մշակել համապատասխան ծրագրեր՝ ուղղված կենսաթոշակների չափերի պարբերաբար բարձրացմանը. այդպիսով նախ նվազեցնելով, ապա բացառելով աղքատությունը կենսաթոշակառուների շրջանում	11. Օրենսդրական բարեփոխումներ՝ ուղղված կենսաթոշակային ապահովության բարելավմանը	2014թ.առաջին եռամսյակ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	ՀՀ պետական բյուջե դոնոր կազմակերպություններ
-«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությանը	12. Հայաստանի Հանրապետության՝ «Քաղաքացիական և քաղաքական	2013թ. երկրորդ, երրորդ եռամսյակնե	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	

միանալու համար անհրաժեշտ օրենքով նախատեսված ընթացակարգերի կատարում	իրավունքների մասին» միջազգային դաշնագրի երկրորդ կամընտիր արձանագրությանը միացում	ր		
- Ապահովել խոշտանգման սահմանման լիարժեք համապատասխանությունը Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ Կոնվենցիայի 1-ին և 4-րդ հոդվածներին. - Ստեղծել ազատազրկման բոլոր վայրերում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացքն ապահովող անկախ համակարգ, որը կերաշխավորի, որ խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող ցանկացած արարք հետապնդվի և պատժվի տվյալ արարքի ծանրությանը համաչափ. - Երեխաների հանդեպ բռնությունը, ներառյալ մարմնական	13. Օրենսդրական բարեփոխումներ, որոնք բխում են ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն	

պատիժը պատժելի դարձնող հատուկ օրենսդրական սահմանումները համապատասխանեցնել միջազգային չափորոշիչներին. - Ստեղծել գենդերային հավասարության հարցերով ազգային մեխանիզմ, ինչը հնարավորություն կտա համակարգել կանանց իրավունքներին և գենդերային հավասարության խնդիրներին վերաբերող հարցերը:				
- Ձեռնարկել միջոցներ նոտարների թվաքանակի ավելացման ուղղությամբ՝ նոտարական գրասենյակներում հերթերը և կուտակումները բացառելու նպատակով. - Ակտիվացնել նոտարական գրասենյակների աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը՝ շեշտը դնելով ծառայությունների դիմաց վճարվող գումարների միասնական քաղաքականության ապահովման վրա. - Հստակեցնել նոտարների կողմից	14. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող օրենսդրական բարեփոխումներ /«Նոտարիատի մասին» ՀՀ օրենք, ՀՀ դատական օրենսգիրք և այլ օրենսդրական, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ/	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն	

վավերացման ենթակա քաղաքացու հայտարարության տեքստը (փաստաթուղթը), գործարքը նոտարական վավերացման ենթարկելու փաստը. - մշակել նոտարական գրասենյակներում և ՔԿԱԳ տարածքային բաժիններում պարբերաբար դիտարկումներ անցկացնելու կարգ՝ քաղաքացուն մտահոգող խնդիրները վերհանելու, ինչպես նաև արհեստական խոչնդոտները վերացնելու ուղղությամբ. - Հստակեցնել ՔԿԱԳ մարմինների իրավական կարգավիճակը՝ այն որևէ մեկ մարմնի ենթակայությանը հանձնելու հարցի լուծմամբ. - Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում վերացնելու այնպիսի կոռուպցիոն երևույթներ, որոնք ի հայտ են գալիս հանձնուքներն ընդունելու, տեսակցությունները կազմակերպելու, խցերը օդափոխելու և այլ դեպքերում. -Հստակեցնել պատժի կրման հետ				

անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները. - Սահմանել ՀՀ դատական օրենսգրքում դատավարական կամ նյութական սխալի ակնհայտ և կոպիտ լինելու չափանիշները: Բացի այդ, հստակություն մտցնել Արդարադատության խորհուրդ դիմելու մեկ տարվա ժամկետի մասով:				
- Փախստականների և ապաստանի վերաբերյալ ՀՀ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակում -Ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովման վերաբերյալ ազգային օրենսդրության ներդաշնակեցում միջազգային պահանջներին	15. Փախստականների և ապաստանի վերաբերյալ ՀՀ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի ընդունում	2014թ. մայիս	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում
- Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց սոցիալական և տնտեսական ինտեգրմանը նպաստող ծրագրերի մշակումը և իրականացումը, անհրաժեշտության դեպքում՝	16. Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց սոցիալական և տնտեսական ինտեգրմանը նպաստող ծրագրերի	2014թ.-ի դեկտեմբեր	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն	ՀՀ պետական բյուջե և ֆինանսավորման այլ աղբյուրներ

համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն - Փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց ՀՀ-ում լիարժեք ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծում	մշակում և իրականացում			
- «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ Կառավարություն	17. «Առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունում	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	
- Ձեռնարկել բավարար միջոցներ առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացման ուղղությամբ. - Ներդնել հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման և բուժման, առողջ ապրելակերպ սերմանող առողջապահության գործուն համակարգ ու հանրային առողջությունն ապահովող միջավայր. - Ընդլայնել կամավոր բժշկական ապահովագրության համակարգը. - Մշակել և կիրառել կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված	18. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. երրորեդ, չորրորդ եռամսյակ	ՀՀ առողջապահության նախարարություն	

արդյունավետ մեխանիզմներ. - Հոգեբուժական բժշկական հաստատություններում ձեռնարկել մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ՝ այդ հաստատություններում ուժեղացնելով վերահսկողությունը. - Սահմանել համավճարի մեխանիզմի կիրառման ընթացքում համապատասխան հանձնաժողովների կողմից համավճարը զեղչելու կամ դրանից ազատելու հիմքեր, չափորոշիչներ				
- Վերանայել և բարելավել հսկողությունը մշակութային արժեքների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում. - Ձեռնարկել միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային կազմակերպությունների մատչելիության ապահովման ուղղությամբ. - Գործողություններ ձեռնարկել ոլորտի օրենսդրությունը բարելավելու, գործող	19. Մարդու մշակութային իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարություն	

օրենսդրությամբ ամրագրված դրույթների իրագործման մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ. - Բարձրացնել նախարարության գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ապահովել Նախարարության տարեկան հաշվետվությունների հրապարակայնությունը:				
- Թանգարանների և գրադարանների հավաքածուների պահպանման, համալրման և հանրայնացման ծրագրերի մշակում. - Մշակութային ժառանգության թվանշայնացում, տեղեկատվական շտեմարանների ստեղծում. - Ստեղծագործական զանգվածային նպատակային ծրագրերի մշակում. - Հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրում. - Միջմարզային մշակութային	20. Մշակութային իրավունքներին ուղղված բարեփոխումների իրականացում	2013թ. ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարություն	

փոխադարձ ճանաչողության ապահովման ծրագրերի մշակում. - Հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնության և բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելմանն ուղղված ծրագրերի մշակում. - Ավանդական ժողովրդական արհեստագործության զարգացման ծրագրի մշակում. - Մշակույթի տարբեր ոլորտներում քաղաքականության իրականացման աշխատանքներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկում և մասնակցություն.				
- Բարելավել հսկողությունը՝ հանցագործության մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալու և ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/34 համատեղ (իրավական ուժը կորցրած) հրամանով	21. Օրենսդրական փոփոխությունների ընդունում՝ ուղղված ոստիկանության գործունեության բարելավմանը	2013թ. ընթացքում	ՀՀ ոստիկանություն	

ղեկավարվելու պրակտիկան բացառելու ուղղությամբ. - Մշակել դիտարկումների արդյունավետ համակարգ՝ բացառելու համար ՁՊՎ-ներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի պահանջների խախտումները և հանցանք կատարելու մեջ կասկածվող անձանց ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1 հոդվածի պահանջների խախտմամբ (3 ժամից ավել առանց կարգավիճակ տալու) պահելու դեպքերը վերացնելու ուղղությամբ. - մշակել արդյունավետ դիտարկումների համակարգ ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ում և տարածքային բաժիններում՝ քաղաքացուն մտահոգող խնդիրները վերհանելու, ինչպես նաև անձնագիր ստանալու հետ կապված անհիմն մերժումները հնարավորինս վերացնելու ուղղությամբ:				
- Ազգությամբ հայ	22. Սոցիալական և	2013թ.	ՀՀ սփյուռքի	

փախստականների սոցիալական և կրթամշակութային ինտեգրման աջակցման ծրագրի մշակում	կրթամշակութային ինտեգրման պետական ծրագրի ընդունում	երրորդ եռամսյակ	նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարությանն առընթեր միգրացիոն գործակալություն	
- Բարելավել և առավել արդյունավետ դարձնել հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ. -Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ. - Ձեռնարկել միջոցներ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների խախտման դեպքերը բացառելու ուղղությամբ. - ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել այլ խափանման միջոցներ և ապահովել դրանց կիրառումը՝ նվազեցնելով կալանքի միջնորդությունների քանակը.	23. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. ընթացքում	ՀՀ դատախազություն (համաձայնությամբ)	

- Խստացնել և առավել արդյունավետ դարձնել հսկողությունը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ. - Ձեռնարկել միջոցներ քրեակատարողական հիմնարկներում դատախազական հսկողության մեխանիզմներն արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:				
–Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ուժեղացնելու համար հսկողությունը ոչ պարենային ապրանքների մակնշման, օգտագործման և պահպանման պահանջների պահպանման նկատմամբ. – Ձեռնարկել միջոցառումներ սպառողների իրավունքների ապահովման և պաշտպանության, ինչպես նաև սպառողների իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով. – Բարձրացնել վերահսկողության արդյունավետությունը՝ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին արտադրանքի	24. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում /«Սպառողների իրավունքների մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ/	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն /համաձայնությամբ/	

համապատասխանության ստուգման նպատակով. – Ձեռնարկել միջոցներ առևտրի իրականացման վայրերի կազմակերպման գործունեության լիցենզիայի տրամադրման ընթացակարգերի թափանցիկության ապահովման, մասնավորապես՝ էլեկտրոնային փաստաթղթավորման համակարգ ներդնելու ուղղությամբ				
– Ձեռնարկել գործուն միջոցներ ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու ընթացակարգի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների կանխարգելման և բացառման ուղղությամբ. – Բարձրացնել ընդերքի օգտագործման և պահպանման բնագավառում օրենքների և իրավական այլ ակտերի ընդունման գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունը. – Ուժեղացնել վերահսկողությունը	25. Բնապահպանական ոլորտը կանոնակարգող օրենսդրության պատշաճ կատարմանն ուղղված միջոցառումների համակարգում	2013թ.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն /համաձայնությամբ/	

ընդերք օգտագործող կազմակերպությունների կողմից օրենքներով, իրավական այլ ակտերով և պայմանագրերով սահմանված պարտավորությունների կատարման նկատմամբ. – Հետևողական քայլեր ձեռնարկել էլեկտրաէներգիայի օգտագործման անվտանգության ապահովման, քաղաքացիների կյանքի, գույքի և շրջակա միջավայրի՝ տեխնիկական կանոնակարգերով և իրավական այլ ակտերով սահմանված նորմերի պահպանման, ինչպես նաև մատակարարի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ:				
– Մշակել և ներդնել գյուղատնտեսությունում պարտադիր ապահովագրական համակարգ. – Մեծացնել սննդամթերքի (մասնավորապես հացի և մսի) որակի, պիտանելիության ժամկետների, մակնշման	26. Գյուղատնտեսության ոլորտին առնչվող ծրագրերի ընդունում	2014թ. առաջին եռամսյակ	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն /համաձայնությամբ/	

ապահովման նպատակով իրականացվող հսկողության պարբերականութունն ու արդյունավետությունը. – «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ հանրապետության ողջ տարածքում մորթի սպանդանոցների ստեղծմանն ուղղված միջոցառումների նախատեսում, առ այն, որ սպանդանոցներում մորթն իրականացվի ոչ թե կամավորության սկզբունքով, այլ պարտադիր. – Սահմանել պատշաճ հսկողություն ՀՀ ներկրվող տարբեր տեսակի սերմացուների որակի նկատմամբ. – Բարելավել սննդամթերքի անվտանգության համակարգը, մասնավորապես՝ կատարելագործել օրենսդրական համապատասխան հիմքերը. – Շարունակել խթանել գյուղատնտեսությունում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին մատչելի պայմաններով վարկեր տրամադրելու				

քաղաքականությունը:				
– Անշարժ գույքի քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեությունը կանոնակարգելու նպատակով ընդունել իրավական ակտեր, սահմանել ուղեցույցներ, չափորոշիչներ, ինչպես նաև քննարկել կատարվող աշխատանքների վարձատրության առավելագույն չափ սահմանելու հնարավորության հարցը. – Տեղեկատվության տրամադրման գործընթացի նկատմամբ հսկողության արդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ. – Մոնիթորինգի իրականացման պարբերականության ապահովում՝ կադաստրի աշխատակիցների կողմից գույքի կադաստրային արժեքը գնահատելիս օրենսդրությամբ նախատեսված պահանջները պահպանելու համար:	27. Սեփականության իրավունքի պաշտպանությանն առնչվող օրենսդրական բարեփոխումներ	2013թ. երրորդ եռամսյակ	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե /համաձայնությամբ/	
–Ձեռնարկել միջոցներ թափանցիկ դարձնելու համար դպրոցների	28. Մարդու կրթական իրավունքների	2014թ. առաջին	ՀՀ կրթության եվ գիտության	

կառավարման խորհուրդների գործունեությունը՝ հատկապես դպրոցի տնօրենների ընտրությունների ժամանակ. –Վերանայել աշակերտների թվաքանակով դպրոցներին հատկացվող ֆինանսավորման կարգը.քիչ թվով աշակերտներ ունեցող դպրոցները հատկացված գումարներով հնարավորություն ունենան բարելավել նվազագույն հիգիենիկ պայմանները, ձեռք բերեն անհրաժեշտ գույք, ժամանակակից լաբորատոր սարքավորումներ, ունենան համակարգչային դասարան և այլն. – Ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացնել մոնիթորինգ՝ բացահայտված խախտումներին տալով հանրային հնչեղություն, որով կկանխվի խախտումների կրկնակիությունը. – Քննարկել ՀՀ Նախագահի համապատասխան հրամանագրով սահմանված կարգում փոփոխություններ կատարելու հարցը և հիմք ընդունելով	իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	եռամսյակ	նախարարություն	

փաստացի Իրավիճակը՝ սահմանել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից մինչև ուսումնառության ավարտը տարկետում տալու վերաբերյալ կառավարության որոշումների նախագծերը միայն ՀՀ Նախագահի աշխատակազմ ներկայացնելու պահանջ. – Ձեռնարկել միջոցներ քաղաքային և գյուղական հանրակրթական ուսումնական հաստատությունների համաչափ զարգացման ուղղությամբ. – Հանրակրթական ուսումնական հաստատություններում սահմանել սանիտարական նորմեր, դրանց պահպանման կանոններ, իրականացման մեթոդական ուղեցույցներ:				
– Համապատասխան միջոցների ձեռնարկում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նախաքննության երկամսյա ժամկետներում գործերի քննությունն ավարտելու և դրանց անհարկի ձգձգումները բացառելու	29. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ հատուկ քննչական ծառայություն /համաձայնությամբ/	

ուղղությամբ. – Ձեռնարկել միջոցներ օրենքով սահմանված կարգով Հատուկ քննչական ծառայությանը ենթակա գործերը այլ քննչական մարմիններում քննելը բացառելու ուղղությամբ. – Մշակել Ծառայության ներսում «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված հատուկ քննչական ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումների խախտումների և կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանն ուղղված հստակ մեխանիզմներ:				
–Բարձրացնել ՀՌԱ հանձնաժողովի կողմից իրականացվող հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման որակը. –Ձեռնարկել համարժեք միջոցներ՝ հեռուստառադիոծրագրերում քաղաքական և այլ բազմակարծություն ապահովելու նպատակով. – ՀՌԱ հանձնաժողովի իրավասությունները ընդլայնել	30. Հեռուստատեսային և ռադիո հեռարձակման վերաբերյալ օրենսդրական բարեփոխումներ և Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013.թ. երրորդ եռամսյակ	ՀՀ հեռուստատեսության եվ ռադիոյի ազգային հանձնաժողով /համաձայնությամբ/	

թվայնացման գործընթացում և դրա իրականացման կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի գլխադասային մարմնի իրավասությունը հանձնել ՀՌԱ հանձնաժողովին. –Թվայնացման գործընթացը ամբողջությամբ և առավել արդյունավետ կազմակերպելու համար մշակել միասնական փաստաթուղթ, որն իր մեջ կներառի անհրաժեշտ սկզբունքները և միջոցառումները. – Ձեռնարկել հրատապ և համարժեք միջոցառումներ հեռարձակման շուկայի գերկենտրոնացումը կամ մենաշնորհացումը կանխելու ուղղությամբ:				
– Երիտասարդության զարգացման հիմնախնդիրներին անհրաժեշտ ու համակարգային լուծումներ տալու նպատակով Մշակել հստակ մշակված քաղաքականությամբ և գործողությունների ծրագրով ռազմավարության նախագծում. – Երիտասարդ ընտանիքների	31. Սպորտի և երիտասարդության բնագավառում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերի ընդունում	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ սպորտի եվ երիտասարդության հարցերի նախարարություն	

համար, համապատասխան ծրագրերի շրջանակներում բնակարան ձեռք բերելու նպատակով միատեսակ պահանջների և պայմանների սահմանում, գործընթացի նկատմամբ վերահսկողության ու թափանցիկության ապահովում.				
– Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության նկատմամբ Հանձնաժողովի կողմից վերահսկողության լիարժեք իրականացման ուղղությամբ. –Միջոցներ ձեռնարկել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գնային քաղաքականության շարժերի նկատմամբ վերահսկողության օրենսդրությամբ սահմանված մեխանիզմների շրջանակի ընդլայնման ուղղությամբ. –Արդյունավետ գործողություններ ձեռնարկել նոր տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք	32. Մարդու իրավունքների իրականացմանը և պաշտպանությանն առնչվող ծրագրերի իրականացում	2013թ. չորրորդ եռամսյակ	Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով համաձայնությամբ/	

գործելու խոչընդոտման դեպքերի, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության գործողությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ. –Ապահովել տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացումը:				
– Ապահովել գործող ենթակարգավարական կետերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանների կատարումը. –Ձեռնարկել միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցները և կանգառները մատչելի դարձնելու ուղղությամբ. –Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կառուցված տրանսպորտային միջոցների հաշվառման և գրանցման օրենսդրական կարգավորման ուղղությամբ. –Կանոնավոր երթևեկությունը մշտապես ապահովելու նպատակով ապահովել	33. Մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացմանն ուղղված բարեփոխումներ	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի եվ կապի նախարարություն /համաձայնությամբ/	

պարբերական մշտադիտարկում, և հրապարակել իրավախախտների տվյալները:				
–Ուժեղացնել վերահսկողությունը քաղաքաշինական փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ապահովման և համայնքների ղեկավարների՝ ինքնակամ շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման պարտականության կատարման նկատմամբ. – Հետևողական քայլեր ձեռնարկել համայնքի տարածքում կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին բնակիչներին տեղեկացնելու, քննարկումներ կազմակերպելու գործընթացը պատշաճ ապահովելու ուղղությամբ. – Ապահովել պատշաճ վերահսկողություն՝ քաղաքաշինական նորմերի խախտումներով շինարարական աշխատանքների կատարման և շինարարության սահմանված	34. Քաղաքաշինության ոլորտի բարեփոխումներ	2013թ. չորրորդ եռամսյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն /համաձայնությամբ/	

ժամկետների խախտումների բացառման նպատակով. –Ձեռնարկել միջոցներ «Քաղաքաշինական գործունեության հսկողության և վերահսկողության մասին» և «Ճարտարապետության մասին» ՀՀ օրենքների նախագծում ընդունման ուղղությամբ:				